



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ**

*Հետազոտության թեման՝ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ, ՈՐՊԵՍ ԿԱԴԵՆՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ*

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անիկ Սարգսյան

*Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Արտաշատ
քաղաքի Հ.Ճգնավորյանի անվան համար 5 հիմնական դպրոց*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՀԻՄՆԱՄԱՍ. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ,ՈՐՊԵՍ ԿԱՐԵՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ.....	5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	9
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների հանդեպ անտարբերությունը, մակերեսային ընկալումը հետևանք են աշխարհագրական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության¹: Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության: Այս ամենի պահպանումը, ուսուցումը ընկած է դպրոցական կրթության հիմքում, և ուսուցչի գերագույն խնդիրն է այն ճիշտ կերպով սերմանել աշակերտների դեռևս անկայուն գիտակցության մեջ:

Ուսուցման հիմնական նպատակներն են.

- ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման ընթացքում աշակերտների ֆիզիկական երեկույթների հանդեպ հետաքրքրասիրության ապահովումը.

- մարդու վարքագծի էկոլոգիապես ռացիոնալ մոդելի ձևավորումը
- անտառների պահպանություն
- օդային և ջրային ավազանների պահպանություն
- հողային ռեսուրսների պահպանություն
- կենսաբազմազանության պահպանություն
- [լեռնահանքային արդյունաբերության](#) պահպանություն :

Աշակերտի անհատականության ձևավորման գործում մյուս առարկաների հետ համատեղ իր կարևորագույն տեղն է զբաղեցնում շրջակա աշխարհի պահպանումը, ֆիզիկական խնդիրների տարբերակումը: Հենց այստեղից է սկսվում ապագա քաղաքացու ճիշտ վերաբերմունքը իր շրջապատի և անձի հանդեպ:

Մանկավարժի նպատակն է բացահայտել և օպտիմալացնել շրջակա միջավայրի գործոնների ազդեցության մեխանիզմը «աշակերտ-դպրոց կրթական միջավայր»

¹<http://www.irtek.am/views/act.aspx?aid=93900>.

համակարգի վրա և մշակել փոխազդեցության գործընթացի կառավարման տեսությունը այս համակարգի բաղադրիչների հիման վրա:

Դասաժամն արդյունավետ կազմակերպելու համար տեղին է օգտագործել «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագիրը, որը ուսուցման համակարգ է՝ կազմված երեք մասից (խթանում , իմաստի ընկալում , կշռադատում, կարճ՝ ԽԻԿ):

ՀԻՄՆԱՄԱՍ. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ,ՈՐՊԵՍ ԿԱՐԵՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ



Վերջին տասնամյակներում ձևավորվել և բուռն զարգացում է ապրել գիտությունների մի ամբողջ համակարգ՝ **Երկիր մոլորակի բնապահպանության** և բնօգտագործման վերաբերյալ: Բնական միջավայրի պահպանության հիմնախնդիրները պայմանավորված են բնածին և մարդածին մի շարք գործոններով: Բնածին գործոններից են մակերևույթի լեռնային բնույթը, միջլեռնային գոգավորությունների ցամաքայնությունն ու ջրասակավորություն, հողասակավորությունն ու անտառասակավորությունն: Վերջիններս մարդկանց արտադրական գործունեության ընթացքում բնական միջավայրը դարձնում են առավել խոցելի և պահանջում են մեծ ջանքեր դրա կայունությունը պահպանելու համար: «Մարդկության ինքնառնչացման վտանգ», «բնապահպանական և բնօգտագործման հիմնախնդիր» հասկացությունները դարձել են համայն մարդկությանը հուզող հարցեր: Մարդը գոյատևում և ապահովում է իր հասարակական առաջընթացը՝ օգտվելով **բնության** բարիքներից: Մարդու վերաբերմունքը բնական միջավայրի նկատմամբ ի սկզբանե եղել է սպառողական, բայց այդ միջավայրի ինքնազարգացման և ինքնավերականգնման միջոցով «բուժվել են» մարդահարույց վնասները: Այժմ մարդու ակտիվ ներգործությունը բնական միջավայրի վրա այնպիսի ծավալներ է ընդունել, որ խախտվել է ինքնակարգավորման ու ինքնազարգացման ընթացքը (վերջին 30 տարվա ընթացքում բնությունից կորզվել և օգտագործվել է այնքան նյութական պաշար, որքան նախորդ 5000 տարվա ընթացքում):

Զարգացման ներկա փուլում, երբ մեծ թափով զարգանում են այնպիսի գիտությունները, ինչպիսիք են օրինակ աշխարհագրության՝ ի դեմս մեքենաշինության, կամ զենքերի արտադրության գլոբալ մակարդակի, դաստիարակության և կրթության համակարգը կանգնած է հումանիտարացման գործընթացի հետ կապված կարևոր խնդիրների առջև: Դրանք են աշակերտների ուսուցման իրական փոփոխությունների անհապաղ անհրաժեշտությունը, որտեղ պետք է հաշվի առնել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում հասարակության մեջ և բնական միջավայրում²:

Շատ կրթական հաստատություններում աշակերտների հանդեպ բնապահպանական կրթության պաշտոնական մոտեցումը կրթությունը դարձնում է սահմանափակ՝ չտալով նրանց շրջապատող աշխարհում տեղի ունեցող գործընթացների ամբողջական պատկերացումը: Դա պայմանավորված է աշխարհագրության առարկայի կրթության և ուսուցման բարդ բնույթի թերագնահատմամբ, որն առկա է ուսումնական միջավայրում:

Առօրյա կյանքում հաճախ կարելի է առնչվել ֆիզիկական երևույթների հանդեպ անգրագիտության, անտեղյակության, դեֆորմացված էկոլոգիական մտածողության և գիտակցության հետ³:

Խնդրի էությունը կայանում է աշակերտների շարունակական կրթության և համակարգի կազմակերպման ձևերի որոշման մեջ՝ ապահովելով այդ հակասությունների լուծումը:

Շարունակական դաստիարակության և կրթության համակարգը հնարավորություն է տալիս աշակերտների մոտ ձևավորել բարոյական և անհատական վերաբերմունքը բնության նկատմամբ, որպես համընդհանուր արժեք, զարգացնել էմոցիոնալ և զգայական վերաբերմունքը բնապահպանական խնդիրների նկատմամբ և միջին դպրոցի աշակերտների բնության պահպանության գործունեությունը:

Ներկայումս աշակերտի պատասխանատու վերաբերմունքը ֆիզիկական երևույթների նկատմամբ անտարբերության է մատնված՝ որպես անձնական և սոցիալական արժեք:

²<https://narfu.ru/university/library/books/2062.pdf>:

Այս խնդրի լուծման տեսլականը կայանում է հետևյալում. անհրաժեշտ է աշակերտի ֆիզիկական երևույթների կրթության գործընթացի հիմքում ներառել անձնական բնապահպանական անվտանգության ձևավորման համակարգը, որն, իր հերթին, պետք է հիմնված լինի էկոլոգիապես ռացիոնալ վարքի մոդելի վրա:

Անհրաժեշտ է սովորեցնել աշակերտներին անձամբ նախագծել այն ամենը, ինչը կարող է անմիջականորեն ազդել ֆիզիկական և սոցիալական բարեկեցության վրա և սովորեցնել նրանց անհապաղ և գրագետ մշակել պաշտպանական միջոցներ և հետևել դրանց:

Ֆիզիկական երևույթների թեման առավել ընկալելի դարձնելու նպատակով կարելի է օգտագործել ֆրայերի մոդելը: Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, զծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել՝ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Բնապահպանության նկատմամբ ոչ բարեխիղճ վերաբերմունքը բերում է

- Հողերի քայքայման՝ **էրոզիա**, հողերի պնդացում, աղակալում, **սողանքներ**, աղտոտվածություն և այլն:



- [Բնական միջավայրի](#) աղքատացման և որակազրկման՝ [քույսերի](#) և [կենդանիների](#) բազմաթիվ տեսակների, որի հետևանքով հայտնվել են անհետացման եզրին:



- Անտառների ոչ ճիշտ շահագործման հետևանքով արագանում ու խորանում են հողերի էրոզիան, անտառային [գետերի](#) ու [ջրամբարների](#) տղմակալումն ու «ծաղկումը», խախտվում անտառի ջրագրական ռեժիմը:



- Անտառային հողերում ջրի պակասի պատճառով տեղի են ունենում առավել խոնավասեր խոտան ծառատեսակների քանակական ու որակական փոփոխություններ: Սկսվում է անտառային հողերի կենսահամակեցությունների մարդահարույց հաջորդափոխություն (սուկցեսիա) և անտառների վերջնական դեգրադացիան՝ բնական անտառ → երկրորդային անտառ → դիֆուզ ցրված գաճաճ ծառատեսակներ → թփուտներ → անապատացում սխեմայով:



Զգալի բացասական ազդեցություն է գործում **լեռնահանքային արդյունաբերությունը**։ Այս ճյուղի բացասական ազդեցությունը **լանդշաֆտի** և կենսաբազմազանության վրա դրսևորվում է հիմնականում. դատարկ ապարի ու թափոնների կուտակումով և շրջապատում տարածումով, բաց հանքերի շահագործման հետևանքով բնական **լանդշաֆտների** ու էկոհամակարգերի խախտումով, որը հանգեցնում է **լանդշաֆտի** դեգրադացման, **ստորգետնյա ջրերի** ջրաբանական ռեժիմի, ֆիզիկական և քիմիական բաղադրությունների փոփոխություններով:



- Աղտոտված են նաև օդային ու ջրային ավազանները: Կան ջրավազաններ (օրինակ՝ **Դեբեդ** և **Ողջի** գետերի), որոնց ջրային բուսական ու կենդանական աշխարհները խիստ աղքատացել են գետը թափվող արդյունաբերական ջրերից:



-

- Իրենց բացասական ազդեցությամբ աչքի են ընկնում [արդյունաբերության](#) հատկապես մետաղաձուլական և քիմիական ճյուղերը: Չնայած վերջին շրջանում դրանց ծավալները զգալիորեն նվազել են, սակայն երկրի լանդշաֆտներին ու կենսաբազմազանությանը հասցրած վնասը զգալի է:

Կենսաբազմազանության վրա զգալի բացասական ազդեցություն է թողնում [ցեմենտի](#) արտադրությունը: [Հրազդան](#) և [Արարատ](#) քաղաքներն ու դրանց մերձակա տարածքները չափազանց աղտոտված են ցեմենտի փոշով, որն ազդում է հատկապես ագրոկենսաբազմազանության ու անտառային կենսահամակարգի վրա:



- Բնական լանդշաֆտների վրա զնալով աճում է նաև ծավալվող [շինարարության](#) բացասական ազդեցությունը:

- Գնալով ավելանում է [տրանսպորտի](#) վնասակար ազդեցությունը [շրջակա միջավայրի](#) վրա: Օդային ավազանի գլխավոր աղտոտիչը ավտոմոբիլային տրանսպորտն է , որին բաժին է ընկնում մթնոլորտ արտանետվող գազերի շուրջ 90 տոկոսը: Բնակավայրերի օդային ավազանների մաքրության ապահովման արդյունավետ միջոց են մի կողմից կանաչ տնկարկների ընդարձակումը մյուս կողմից՝ դրանց կրճատման դեմ ուղղված հետևողական պայքարը:



- Բնական միջավայրի վրա ազդող հզոր գործոն է **էներգետիկան**, որի արդյունաբերական արտանետումներում մեծ է ՋԷԿ-երի բաժինը:

ԱԷԿ-ը հատկապես վտանգավոր է շահագործման տեխնոլոգիական ռեժիմի հնարավոր շեղումների առումով և **թափոնների** առավել վտանգավորությամբ :



Վերջնարդյունքներ: Դասապրոցեսի ավարտին աշակերտը պետք է ընդհանուր գաղափար կազմի՝

- ֆիզիկական երևույթների, զարգացման փուլերի,
- բնապահպանության ընդհանուր պատկերի,
- հողերի քայքայման
- հողերի աղակալման
- ջրերի աղտոտվածության
- մթնոլորտի աղտոտվածության
- ներկայացնի ֆիզիկական երևույթների վերաբերյալ սեփական կարծիքը
- բերել օրինակներ թեմայի վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անբարենպաստ շրջակա միջավայրի գործոնների ազդեցության ներքո, որոնք կարող են պայմանավորված լինել, օրինակ՝ արտանետումների մակարդակի բարձրացմամբ, անձնական շրջակա միջավայրի անվտանգության ապահովումը ձեռք է բերվում վարքի է ոացիոնալ, այսինքն տրամաբանական մոդելի հիմքերի ձևավորման միջոցով, որը և հանդիսանում է «աշխարհագրության» առարկայի կարևոր տարրը:

Դասապրոցեսի ավարտին աշակերտները կարողացան .

- ֆիզիկական երևույթների, զարգացման փուլերի,
- բնապահպանության ընդհանուր պատկերի,
- ներկայացնել ֆիզիկական երևույթների վերաբերյալ սեփական կարծիքը
- բերել օրինակներ թեմայի վերաբերյալ:

Աշխարհագրության ուսումնասիրում է ֆիզիկական երևույթների փոխազդեցությունը շրջակա միջավայրի հետ: Դպրոցը «միջավայր» է, և ուսուցիչների խնդիրն է դարձնել այս միջավայրը հարմարավետ և ապահով աշակերտների համար: Ուսուցումն անհրաժեշտ է այնպես ձևակերպել, որ շրջանավարտը ավարտելիս կրթության դպրոցական փուլը՝ ֆիզիկապես և հոգեպես առողջ լինի, որի գործնական դրսևորումը վարքի էկոլոգիական ոացիոնալ մոդելն է:

Ֆիզիկական խնդիրների լուծումն անհնար է առանց աշակերտների կրթության արդյունավետ համակարգի ձևավորման: Սա կրթական ուսումնասիրության առարկան է, որի ձևավորումը կանխորոշված է ժամանակի պահանջով և որը միտված է ապահովելու բնակչության բնապահպանական անվտանգությունը: Բնապահպանական գիտելիքների պաշարի հարստացումը , բնության նկատմամբ սերը ,բնագիտական արժեհամակարգի ձևավորումը ,բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքը ,անտառների ,օդային ,ջրային ռեսուրսների պահպանությունը ,հանքարդյունաբերությունը և նրանց ճիշտ օգտագործման մասին հիմնարար գիտելիքները կձևավորի աշակերտների մոտ բնությունը պահպանելու մարդկության հիմնարար արժեհամակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. В.В. Лисниченко.Н.Б.Лисниченко. Основы педагогической экологии/
В.В.Лисниченко, Н.Б.Лисниченко; Северный (Арктический) федеральный
университет им. М.В.Ломоносова. Институт судостроения и морской
арктической техники (ИСМАРТ).- Северодвинск: ОАО «Северодвинская
городская типография», 2015. – с-6.
2. 4.В.В. Лисниченко.Н.Б.Лисниченко.Основы педагогической экологии/
В.В.Лисниченко, Н.Б.Лисниченко;
3. Северный (Арктический) федеральный университет им.
М.В.Ломоносова.Институт судостроения и морской арктической техники
(ИСМАРТ).- Северодвинск: ОАО «Северодвинская городская типография», 2015.
– с-6.

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ

4. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=93900>.
5. <https://narfu.ru/university/library/books/2062.pdf>: